ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ուսուցչի կողմից ուսումնական պրոցեսում ՈՒՀ կանոնադրությամբ, իրավական ակտերով և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարողունակությունների ձևավորումը»

Կատարող՝ Ռ. Արզումանյան

Դպրոց՝ Արարատի մարզ «Արգավանդի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

Առարկա՝ հասարակագիտություն

Կազմակերպություն՝ «Երևանի Վ. Վարդևանյանի անվան հ.173 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Խմբի ղեկավար՝ պ.գ.թ. Արմեն Աբգարյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....3

2 Կարողունակության հասկացությունը և հանրակրթական պետական չափորոշիչով սահմանված ութ առանցքային կարողունակությունները.....4

3. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված կարողունակությունների ձևավորման մեթոդաբանությունը.....9

4. Եզրակացություն.....17

5. Օգտագործված գրականության ցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Ներկայումս հանրակրթությունը գտնվում է փոփոխությունների փուլում, որի ընթացքում առանձնապես կարևորվում է կարողունակությունների ձևավորումը: Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցներից/սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները. խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ներկայացուցիչները և այլ անձինք / յուրաքանչյուրը դեր ունի ուսումնական գործընթացի կազմակերպման գործում և նպաստում է սովորողի կարողականությունների ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտելու ենք, թե ինչպես են ՈՒՀ ներքին իրավական ակտերը և կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները ազդում սովորողի ՀՊՉ-ով սահմանված 8 հիմնարար կարողունակությունների ձևավորման վրա և ուսումնական գործընթացի յուրաքանչյուր մասնակից, օժտված լինելով որոշակի իրավունքներով և պարտականություններով, ինչպես է նպաստում դրանց ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի օբյեկտը: Հետազոտական աշխատանքի օբյեկտը ուսումնական պրոցեսն է, որի ընթացքում սովորողները բացի գիտելիքներից ձեռք են բերում ութ առանցքային կարողունակություններ, որոնք նշված են հետազոտական աշխատանքի մեջ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Կատարված աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից: Ծավալը կազմում է 18 էջ՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

1. Կարողունակության հասկացությունը և ՀՊՉ-ով սահմանված ութ առանցքային կարողունակությունները

Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ):

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:

Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ[1]:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

[1] https://elearning.kasa.am/mod/book/view.php?id=7566&chapterid=4747

1) **Լեզվական գրագիտություն և կարողունակություն.** սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր.

2) Սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն.

3) Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու

հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները.

4) Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն. սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետահիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն.

5) Թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի

աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով.

6) Մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ.

7) Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն. սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի,

աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը.

8) Տնտեսական կարողունակություն. աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

Հանրակրթական բնագավառը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, ոլորտը կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով,ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 137 - Ն որոշմամբ,«հանրակրթության մասին »օրենքով ,միջազգային պայմանագրերով և մի շարք այլ իրավական ակտերով:

2.Ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված կարողունակությունների ձևավորման մեթոդաբանությունը

Կանոնադրությունը նորմատիվ հավաքական ակտ է, որը որոշում է պետական մարմինների կառուցվածքը, խնդիրներն ու իրավասությունները, պետական մարմինների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց գործողությունների կարգը՝ որոշակի դեպքերում (օրինակ՝ պետական կանոնադրություն, հասարակական կազմակերպությունների ու հիմնարկների դրամարկղային գործառնությունները վարելու մասին) կամ կարգավորում է կոնկրետ հարցերով կազմակերպական, գույքային, աշխատանքային հարաբերությունների ամբողջությունը:

Կանոնադրություններ ունեն պետական հասարակական բոլոր կազմակերպությունները:

Իրավական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաեւ իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ (այսուհետ՝ վարքագծի կանոններ): Իրավական ակտը կարող է ունենալ ժամանակավոր կամ մշտական բնույթ, կարող է նախատեսված լինել մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար: Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ):

Կարողունակությունները ձևավորվում են ուսումնական գործունեության տարատեսակ ձևերի, ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների

կիրառման արդյունքում: Առավել արդյունավետ կարող են լինել ուսումնական գործունեության այնպիսի ձևերը, ինչպիսիք են՝

1. նախագծային աշխատանքը,

2. հետազոտությունը,

3.բանավեճը,

4.ուսումնական ֆիլմերի դիտումը և քննարկումը,

5.էքսկուրսիաները,

6.սեմինարները,

7. դպրոցական գիտաժողովները,

8.ներկայացումները և այլն:

Դասավանդման նախագծային մեթոդն իրենից ներկայացնում է կրթական մեթոդների ամբողջական մի համակարգ, որը հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ պայմանավորված կոնկրետ հանձնարարություններով և դրանք ինքնուրույն իրականացնելու նախապայմանով: **Բանավեճը** վիճաբանություն է, բանավոր քննարկում, վիճելի կամ հրատապ հարցի շուրջ երկու կողմերի տարբեր հիմնավորումների, փաստարկների, պնդումների ու ապացույցների ձևակերպում ու մտքերի հանրային, բանավոր արտահայտում: Բանավեճը պետք է լինի նյութերի հավաքագրման և դրանց միջոցով փաստարկների ձևակերպման արդյունք: Հանրային երկխոսության այս տարատեսակի առանձնահատկությունն այն է, որ մասնակիցները ոչ թե մեկը մյուսին ապացուցեն իրենց ճշմարտացիությունը, այլ՝ երրորդ կողմին: Այդ պատճառով մասնակիցների կիրառած վերբալ և ոչ վերբալ միջոցները նպատակ ունեն լսարանի մոտ ձևավորել որոշակի կարծիք վիճաբանության առարկա խնդրի վերաբերյալ:Ուսուցիչը կարող է կազմակերպել ուսումնական ֆիլմերի դիտումը և քննարկումը, էքսկուրսիաները, սեմինարները,դպրոցական գիտաժողովները, ներկայացումները և այդ բոլորի արդյունքում աշակերտները կունենան ,ինչպես նոր գիտելիքներ,այնպես էլ նոր կարողունակություններ:

Բացի այն ամենից, ինչ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է անել կոնկրետ առարկայական ծրագրի շրջանակներում՝ մի քանի առարկաների ուսուցիչների համագործակցությունը կարող է հանգեցնել կոմպետենցիաների զարգացման արժեքավոր և արդյունավետ լրացուցիչ արդյունքների:

Այսպիսի համագործակցությունը կարող է տեղ գտնել ինչպես նույն դասարանի, այնպես էլ տարբեր դասարանների հետ աշխատող ուսուցիչների միջև:

Նույն դասարանի հետ աշխատող տարբեր առարկաների ուսուցիչները կարող են դասի պլանը կազմել այնպես, որ, համագործակցելով և փոխլրացնելով միմյանց, առավելագույնս նպաստեն այս կամ այն կարողունակության ձևավորմանը: Դրա արդյունքում դասարանը բոլոր առումներով աստիճանական առաջընթաց կունենա, իսկ ուսուցիչները կխուսափեն մասնակի համընկնումներից և կրկնություններից: Ուսուցիչները կարող են միասին պլանավորել նախագծային ուսումնառության աշխատանքներ կամ այնպիսի փոխհատվող թեմաներ, ինչպիսիք են, օրինակ, մարդու իրավունքները, կայուն զարգացումը, բռնության կանխարգելումը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն[2]:

Դպրոցում ուսումնական գործընթացի մասնակիցներից յուրաքանչյուրը յուրահատուկ դեր ունի ուսումնական գործընթացի կազմակերպման գործում և սովորողի կարողականության ձևավորման նպաստմանը: Իհարկե առաջնային դեր ունի ուսուցիչը որպես ուսուցում իրականացնող հիմնական սուբյեկտ, բայց չպետք է թերագնահատվի այլ մասնակիցների դերը ուսումնական գործընթացի կազմակերպմանը և որպես հետևանք սովորողի մոտ կարողականության ձևավորմանը գործընթացում:

Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և

[2] https://elearning.kasa.am/mod/book/view.php?id=7566&chapterid=4747

հմտությունների համապատասխանությունը, իրականացվում է պետական ամփոփիչ ատեստավորում, և տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ[3]:

Ուսուցման պրոցեսի հաջող ընթացքի գրավականը դպրոցական կարգապահությունն է: Այն հիմնականում իրականանում է ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում և ծառայում է դպրոցի ներքին խնդիրների լուծմանը: Դպրոցական կարգապահությունը դպրոցականների վարքագծի որոշակի կարգ է՝ պայմանավորված ուսումնական գործընթացի հաջող կազմակերպման անհրաժեշտությամբ: Սովորաբար տարբերություն կա արտաքին և ներքին կարգապահության միջև:

Արտաքին կարգապահությունը ես կոչում եմ հնազանդություն, հնազանդություն և հնազանդություն, որոնք հիմնված են արտաքին դրական և բացասական պատժամիջոցների վրա՝ խրախուսանք և պատիժ:Ներքին կարգապահությունը աշակերտի կարողությունն է՝ զսպելու անցանկալի ազդակները, ինքնուրույն վերահսկելու իր վարքը: Այն հիմնված է կանոնների ու նորմերի յուրացման վրա, որը գործում է որպես ներքին կարիք:Հիմնական պայմանը, որն ապահովում է դպրոցականների կարգապահական վարքագիծը դասարանում, խնամքով մշակված դասն է: Երբ դասը լավ է կառուցված, նրա բոլոր պահերը հստակ ծրագրված են, եթե բոլոր երեխաները զբաղված լինեն իրենց աշխատանքով, կարգապահությունը չեն խախտի: Երեխան անգիտակցաբար կարգավորում է իր վարքը՝ նրան գրավում է հետաքրքրություն ներկայացնող իրավիճակը: Հետեւաբար, հենց որ դասը դառնում է անհետաքրքիր, կարգապահ վարքագիծը վերանում է:Բայց ամեն դաս չէ, որ կարող է ուսուցիչը հետաքրքիր դարձնել, իսկ մանկավարժական հմտության գաղտնիքները անմիջապես չեն յուրացվում: Դասարանում դպրոցականների կարգապահ վարքագծի վրա ազդող կարևոր գործոն է ուսուցչի և երեխաների փոխհարաբերությունները: Ուսուցչի դիրքորոշումն առաջին հերթին արտահայտվում է, թե վարքագծի վերահսկողության ինչ մեթոդներ է կիրառում ուսուցիչը: Իմ պրակտիկայում ես օգտագործում եմ 3 մեթոդ՝ համոզում, պահանջ, առաջարկ: Համոզելու մեթոդը վարքի

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908

նորմերն ու կանոնները բերում է դպրոցականների գիտակցությանը: Երեխան պետք է զգա և գիտակցի կարգապահության արժեքն ու նշանակությունը իր և ուրիշների համար[4]:

Դպրոցական կարգապահության պահպանումը պայմանավորում է ՀՊՉ 8 հիմնարար կարողականությունների ձևավորումը: ՈՒսումնական հաստատությունը, մեր դեպքում դպրոցը, կարևորելով այս դրույթը, հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը հոդված 218 կետ1,2, «ՀՀԱրարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կանոնադրության 48-րդ կետի 13-րդ ենթակետը ընդունել է ներքին կարգապահական կանոնները: Ըստ այդ կանոնների կարողունակությունների ձևավորմանը նպաստում է առողջ և կենսունակ հարաբերությունները մի կողմից ուսուցիչ-աշակերտ, մյուս կողմից ուսուցիչ-ուսուցիչ և ուսուցիչ–ծնող փոխհարաբերություններով[5]:

Ուսուցիչն աշակերտների հետ իր հարաբերությունները պետք է կառուցի փոխադարձ հարգանքի վրա: Նա պետք է հարգի աշակերտների անհատականությունը անկախ նրանց տարիքային և անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնողների ունեցվածքի, հասարակական դիրքի կամ որևէ այլ կարգավիճակի հետ կապված հանդամանքից

Ուսուցիչը պետք է անաչառ ու բարյացակամ լինի բոլոր աշակերտներիՆկատմամբ, հետևողական նրանց կրթական պահանջների բավարարման գործում,Պատրաստակամությամբ արձագանքի ձագած բոլոր խնդիրներին:

Ուսուցիչը պետք է նպաստի սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը, այդ թվում՝ ինքնուրույնության, ինքնավերահսկման, ինքնակրթության, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամությանը և այլն:

---

[4] https://mywordworld.ru/hy/russkaya-literatura/disciplina-v-shkole-zalog-uspeshnogo-obucheniya-problema-shkolnoi-discipliny/

[5] ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 218 կետ 1,2

Ուսուցիչը պետք է հարգի իր սովորողների մտքի, խղճի և դավանանքի ազատությունը, պատշաճ ուշադրություն դարձնի նրանց արտահայտած կարծիքներին:

Ու հայացքներին և նրանց չպարտադրի իր սեփական հայացքները, դասընկերների չհասցնի ահձևական վիրավորանքներ կամ մատնանշի նրա անձնային բացասական կողմերը:

Ուսուցիչները պետք է ձգտեն միմյանց հետ ակտիվ համագործակցության, փոխադարձաբար հարգեն և օգնեն իրար, կարևորեն միմյանց և ուսումնական հաստատության շահը: Ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը:

Ուսուցիչը պարտավոր է պաշտպանելու ոչ միայն իր,այլև գործընկերոջ հեղինակությունը՝ Սովորողների կամ այլ անձանց ներկայությամբ նա չպետք է նսեմացնի գործընկերներին:

Դպրոցի ներքին կարգապահական կանոնոներում բացի սովորողների իրավունքների և պարտականությունների բաժնից կա վարքագծի ընդհանուր կանոններ, որոնք պարտադիր են աշակերտի համար:

1.Աշակերտները գալիս են դպրոց դասի մեկնարկից 15 րոպե առաջ մասնակցելու նախավարժանքին:

2.Աշակերտը պարտավոր է դպրոցում պահպանել հագուկապին և անձնական հիգիենային ներկայացվող հետևյալ պահանջները:

1) Ընդհանուր բնույթի պահանջներն են.

ա. հագուստը պետք է լինի մաքուր, պատշաճ վիճակում, արգելվում է կրել սպորտային համազգեստ, բացառությամբ ֆիզկուլտուրայի դասաժամերի:

բ. մազերը պետք է լինեն մաքուր և հարդարված:

գ. պետք է պահպանվի անձնական հիգիենան:

3. Աշակերտը պարտավոր է տնային աշխատանքը կատարել դպրոցական ծրագրով սահմանված ժամկետում:

5. Դասի ներկայանալ անհրաժեշտ դասագրքերով ու գրենական պրտույքներով:

6. Արգելվում է զենք (այդ թվում՝ դանակներ), պայթուցիկ, դյուրավառ նյութեր դպրոցի տարածք բերել ցանկացած նպատակով և ցանկացած ձևով, օգտագործել ալկոհոլ ծխախոտ, թմրանյութեր, այլ թունավոր նյութեր:

7. Ծխելն արգելվում է դպրոցի տարածքում:

8. Դասարանում չի թույլատրվում մաստակ ծամել, նվագարկիչներ և շարժական սարքեր օգտագործել:

10. Դպրոցի աշակերտները պետք է հարգեն աշակերտների և դպրոցի անձնակազմի արժանապատվությունը:

11. Ֆիզիկական առճակատումը, ահաբեկումը և նվաստացման փորձերը, ազգային կամ ռասայական հիմքով անձնական խտրականությունը վարքագծի անընդունելի ձևեր են: Դպրոցը խստորեն դատապարտում է այս պահվածքը:

12. Աշակերտները խնամքով վերաբերվում դպրոցի գույքին, խնամքով վերաբերվում ինչպես սեփական, այնպես էլ ուրիշների ունեցվածքին, պահպանում են մաքրությունն ու կարգուկանոնը դպրոցի տարածքում: Դպրոցի գույքին վնաս պատճառելու դեպքում ծնողները (օրինական ներկայացուցիչները) պարտավոր են հատուցել այն:

13. Բոլոր աշակերտներն իրենց հնարավորությունների սահմաններում մասնակցում են դպրոցի և դպրոցի տարածքի բարեկարգման աշխատանքներին:

14. Դպրոցական դասաժամերին աշակերտը չպետք է լքի դպրոցը առանց դասղեկի կամ բուժքրոջ թույլտվության:

15. Դասերից բացակայելու դեպքում աշակերտը դասղեկին պարտավոր է ծնողներից տեղեկանք կամ գրություն ներկայացնել դասից բացակայելու պատճառի մասին:

16. Երբ ուսուցիչը մտնում է դասարան, աշակերտները ոտքի են կանգնում և ողջունում ուսուցչին:

17. Դասի ժամանակ չպետք է աղմկել, շեղվել ինքն իրենից և դասերից շեղել մյուս ընկերներին այլ խոսակցություններով, խաղերով և դասի հետ չկապված այլ գործերով, քանի որ դա խախտում է այլոց իրավունքները՝ ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ։

18. Դասի ընթացքում սովորողներն իրավունք ունեն օգտվել դպրոցական սարքավորումներից, որոնք դասերից հետո վերադարձնում են ուսուցչին։ Անհրաժեշտ է ուշադիր վերաբերվել դրանց։

19. Եթե աշակերտը ցանկանում է ուսուցչին հարց տալ կամ պատասխանել ուսուցչի հարցին, նա բարձրացնում է ձեռքը։

20. Արգելվում է դասի ժամանակ օգտագործել բջջային հեռախոսներ, էլեկտրական այլ սարքավորումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են ուսումնական նպատակներով[6]։

Այս պայմանների կատարմանը դպրոցում հետևում են ինչպես ուսուցիչները, մանկավարժական աշխատողները, այնպես էլ աշակերտական խորհուրդը։ Եթե ուսումնական պրոցեսի մասնակիցներից յուրաքնչյուրը իր տեղում է, ապա ուսուցումը արդյունավետ է՝նոր գիտելիքների ստացման հետ աշակերտները նոր հմտություններ, արժեքներ, դիրքորոշումներ, կարողունակություններ են ձեռք բերում;

[6] «ՀՀ Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոններ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ուսուցչի կողմից ուսումնական պրոցեսում ՈՒՀ կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված կարողունակությունների ձևավորման մասին սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

● դպրոցում կրթական գործընթացի մասնակիցներից յուրաքանչյուրը դեր ունի ուսումնական գործընթացի կազմակերպման գործում և նպաստում է սովորողի կարողականությունների ձևավորմանը:

● կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:

● կարողունակությունները ձևավորվում են ուսումնական գործունեության տարատեսակ ձևերի, ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունքում:

● ուսումնական գործընթացում առաջնային դեր ունի ուսուցիչը որպես ուսուցում իրականացնող հիմնական սուբյեկտ, բայց չպետք է թերագնահատվի այլ մասնակիցների դերը:

● ուսումնական գործընթացի մյուս մասնակիցները՝ ի դեմս մանկավարժական աշխատողների և աշակերտների, ապահովում են դպրոցում օրինապահությունը և կարգապահությունը, որն էլ կարողունակությունների ձևավորման ամենաանհրաժեշտ և կարևոր նախադրյալն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://elearning.kasa.am/mod/book/view.php?id=7566&chapterid=4747

2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908

3. https://mywordworld.ru/hy/russkaya-literatura/disciplina-v-shkole-zalog-uspeshnogo-obucheniya-problema-shkolnoi-discipliny/

4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 218 կետ 1,2

5. «ՀՀ Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոններ